ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

16.04.2014թ.
217-ի 1

ՀՀ սպորտի եւ երիտասարդության հարցերի
նախարարի պաշտոնակատար
պարոն Յուրի Վարդանյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Վարդանյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Հաշմանդամների ֆիզիկական դաստիարակության եւ հաշմանդամային սպորտի հարցերով զբաղվող քանի՞ հասարակական կառույց (ՀԿ, հիմնադրամ, ֆեդերացիա, ակումբ եւ այլն) կա Հայաստանում,
2. Խնդրում ենք տրամադրել դրանց ցանկը,
3. Հաշմանդամների ֆիզիկական դաստիարակության եւ հաշմանդամային սպորտի հարցերով զբաղվող քանի՞ պետական հիմնարկ (ՊՈԱԿ, գործակալություն, ծառայություն եւ այլն) կա Հայաստանում,
4. Խնդրում ենք տրամադրել դրանց ցանկը,
5. Քանի՞ հաշմանդամ մարզիկ կա Հայաստանում (խնդրում ենք հաշմանդամ մարզիկների քանակի մասին տեղեկությունը տրամադրել ըստ սպորտաձեւերի):

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Սույն հարցման կարգավիճակին կարող եք առցանց հետեւել Ինֆորմացիայի ազատության կենտրոնի www.givemeinfo.am կայքում՝ հետեւյալ հղմամբ՝ http://givemeinfo.am/hy/case/1354/:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան